# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 17 հուլիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Բունդեսթագի փնփեսական համագործակցության հանձնաժողովի անդամներին՝ պարոն Պեփեր Վայսի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարին պայմանները և դրանց հաղթահարմանն ուղղված Հայ Առաքելական Եկեղեցու ծրագրերը: Վերջինիս առիթով Նորին Սրբությունն իր երախտիքը հայտնեց գերմանական բոլոր այն բարեսիրական կազմակերպություններին, որոնք 1988 թ. աղետալի երկրաշարժից ի վեր իրենց աջակցությամբ նպաստում են վերոհիշյալ ծրագրերի իրականացմանը:

Անդրադառնալով Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների ծրագրերին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ այդ ծիրից ներս նախատեսվում են միջոցառումներ նաև Գերմանիայում. առաջիկա սեպտեմբերին հոբելյանական ցուցահանդես և գիտաժողով կկազմակերպվի գերմանական Հալլե քաղաքում:

Ի պատասխան հյուրերի հարցումների, Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայաստանում աղանդավորության տարածման խնդիրներին: Վերջինիս առիթով Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Եկեղեցին ողջունելով խղճի ազատության օրենքը, միաժամանակ դատապարտում է այդ օրենքի խեղաթյուրումն ու չարաշահումը, ինչը պատճառ է դառնում ազգի և ընտանիքի անդամների պառակտմանը:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլկեր Զայթցը: